

ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ՄՈՍԱՏԻ ՄԱՏՆԱՐԵՏԵՐ

Ներքին գործերու նախարարի պաշտօնակատար Պասամ Մաուլաուի եւ դատական ու ապահովական կառույցներ երեկ Նշեցին, որ, ըստ նախնական տուեալներու, իսրայէլեան Մոսատը պատասխանատու է լիբանանցի լուսնայափոխ Մոհամմատ Սրուրի ահաբեկումին, որ տեղի ունեցաւ անցեալ երեքշաբթի օր, Պեյթ Մերի շրջանի բնակարաններէ մէկուն առջեւ: Նշեցք, որ Սրուր կը հետապնդուէր Յամասի նիւթական միջոցներու փոխանցումը դիրացնելու մէջ եւ անհետ կորսուած էր 3 Ապրիլին: Ոճրագործները սակայն չէին գողցած անոր փոխադրած դրամական գումարը:

ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ՆԵՐԹԱՓՈՒՆՅՈՒՄԻ ԶԱԽՈՂ ՓՈՐՁ

Իրանէն իսրայէլի ուղղութեամբ կատարուած հրթիռարձակումին հետեւեցող տարածաշրջանային սրած լարածութեան զուգահեռ, երեկ ապահովական նոր զարգացումներ եղան Լիբանանի հարաւի սահմանային գոտիին վրայ: Զոգապալլա յայտարարեց, թէ ականուած ծրարով մը թիրախաւորած է իսրայէլեան յատուկ ուժերու խումբ մը,



որ ներթափանցած էր Լիբանանի սահմանը: «Ուշադրութեամբ հետեւելով իսրայէլեան ուժերուն շարժումները, դիմադրութեան մարտիկները ականուած ծրարներ տեղադրեցին սահմանամերձ Թել Իսմայէլ շրջանին մէջ, իսկ երբ իսրայէլեան յատուկ ուժերու Կոլանի զօրախումբէն զինուորներ հասան Նշեալ շրջանը, ականները պայթեցան՝ իսրայէլացիներուն պատճառելով մարդկային եւ նիւթական կորուստ», Նշուեցաւ: Զոգապալլայի յայտարարութեան մէջ: Իսրայէլեան բանակը իր կարգին յայտարարեց, թէ սահմանային գոտիին վրայ պատահած պայթումին պատճառով վիրաւորուած է չորս զինուոր: Իսկ իսրայէլեան լրատուամիջոցները հաստատեցին, որ պայթումը տեղի ունեցած է լիբանանեան հողի վրայ, ուր ներթափանցած էին իսրայէլացի զինուորները:

ԽՈՐ ՄՏԱՅՈՒԹԻՒՆ


Լիբանանի Արտաքին գործերու նախարարութիւնը յայտարարեց, թէ խոր մտահոգութեամբ կը հետեւի տարածաշրջանի վերջին զարգացումներուն եւ կը գիտակցի,



որ իրավիճակը հասած է անդունդի եզրին, մինչ Կազայի պատերազմը շուտով կը բուրբէ իր 7-րդ ամիսը, սակայն ՄԱԿ-ի Ապահովութեան խորհուրդին 2728 բանաձեւը չէ գործադրուած եւ երկու պետութիւններու վրայ հիմնուած լուծումի հնարաւորութիւն ցարդ չկայ:

ԼՈՒՇԵԼ ՏԵՐԱՅԱՆՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ

Վարչապետի պաշտօնակատար Նեժիպ Միքաթիի հրաւերով, երեկ վարչապետարանին մէջ տեղի ունեցաւ նախարարներու խորհրդակցական ժողով, որ նուիրուած



էր շրջանային զարգացումներու եւ Լիբանանի ապահովական վիճակի արծարծումին, նաեւ սուրիացիներու տեղահանութեան թղթածրարին: Միքաթի ժողովին ընթացքին Ներքին գործերու նախարարութենէն պահանջեց խստացնել օրէնքներու գործադրութիւնը եւ կանխել խախտումները տեղահանուած սուրիացիներուն կողմէ: Տեղեկատուութեան նախարարի պաշտօնակատար Չիատ Մաքարի հանդիպումէն ետք յայտարարեց, թէ Միքաթի կարելորած է Լիբանանի ներքին խաղաղութեան պահպանումը, դրուատելով ապահովական ուժերուն դերակատարութիւնը: Ժողովականները քննարկած են սուրիացիներու տեղահանութիւնը, որոշելով գործադրել լիբանանեան օրէնքները բոլորին վրայ: Ժողովականները նաեւ անշնչակից մարմիններէն պահանջած են փակել սուրիացիներուն պատկանող ապօրինի հաստատութիւնները եւ զերծ մնալ քաղաքական միջամտութիւններէն:

Ներքին գործերու նախարարի պաշտօնակատար Պասամ Մաուլաուի յայտնեց, որ Լիբանան ապաստանած երկու միլիոն սուրիացիներէն միայն 300 հազարը ունին կեցութեան արտօսագիր, 800 հազարը կը կրեն տեղահանութեան կարգավիճակ, իսկ մեկ միլիոն երկու հարիւր հազարը ընդհանրապէս չեն գրանցուած:

Ազգային ազատ հոսանքի նախագահ, երեսփոխան

ժըպրան Պասիլ շեշտեց սուրիացի տեղահանուածներուն թղթածրարին հարցով խօսքէն գործի անցնելու անհրաժեշտութիւնը: Դիտել տալով հանդերձ, որ սուրիացիներուն տեղահանութիւնը գոյութեան կանխարգելիչ կը սպառնայ Լիբանանին, Պասիլ շեշտեց, որ ոչ-բոլոր գաղթականները ոճրագործ են, ուստի կարելի չէ խնդրել լուծել անոնց նկատմամբ բռնութիւն գործադրելով, այլ անհրաժեշտ է երկրէն վտարել լիբանանեան բանտերուն մէջ գտնուող



սուրիացիները, նաեւ անոնք, որոնք ապօրինաբար մուտք կը գործեն Լիբանան: Պասիլ լիբանանեան քաղաքապետութիւններուն կողմէ ուղղեց հետեւելու իրենց իշխանութեան շրջաններուն մէջ գտնուող սուրիացիներուն եւ հեռացնելու բոլոր օրինախախտները, աւելցնելով որ անհրաժեշտ է չեղարկել գաղթականի կարգավիճակը այն սուրիացիներէն, որոնք պայմանները համահունչ չեն տեղահանութեան կարգերուն:

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ 19 ՄԱՅԻՍԻՆ

Ներքին գործերու նախարարի պաշտօնակատար Պասամ Մաուլաուի յայտնեց, որ Լիբանանի հիւսիսային եւ Աքքար նահանգներուն մէջ քաղաքապետական եւ թաղապետական ընտրութիւնները տեղի պիտի ունենան 19 Մայիսին: Նշեցք, որ ընտրութիւնները արդէն յետաձգուած են երկու անգամ եւ կը կարծուի, որ շուտով պիտի վաւերացուի երրորդ յետաձգումը, թէի ներքին գործերու նախարարութիւնը կը փորձէ ամբողջացնել նախապատրաստական աշխատանքները:



Լիբանանեան ուժեր կուսակցութեան նախագահ Սամիր Շաաժա կարծիք յայտնեց, որ Լիբանանի մէջ դիմադրութեան ճակատն ու Ազգային ազատ հոսանքը կ'ուզեն

(Շար.ը տեսնել 2րդ էջ)

ԳԱՆԱՏԱՅԻ ԴԵՏ ԶԱՅԿԱՏԱՆԻ ՍԱՅՄԱՆԻՆ ՎՐԱՅ

Յայ-ատրպէյճանական սահմանային գոտիին վրայ դիտարկում կատարող Եւրոմիութեան քաղաքացիական դիտորդական առաքելութիւնը համալրուած է գանատացի մասնագետով: «Ուրախ ենք ողջունել գանատացի ա-



ռաջին դէտ Ալեքսանտր Կրուշչեւսքին: Գանատան կ'աջակցի Յայաստանի մէջ եւրոպական առաքելութեան», Նշուեցաւ յայտարարութեան մէջ: Նշեցք, որ առաքելութեան դէտերը շարունակաբար կը վերահսկեն հայ-ատրպէյճանական սահմանային գոտիի որոշ հատուածներ՝ արձանագրելու զինադադարի խախտումները:

ԶԱՅԿԱԿԱՆ ՅԱԲԵԼԵԱՆ ԱՐԲԱՆԵԱԿՆԵՐ

Յայաստանի բարձր արհեստագիտական արդիւնաբերութեան նախարար Մխիթար Յայրապետեան յայտնեց, որ Երեւան կը մտադրէ տիեզերքի մէջ իր արբանեակներուն թիւը բարձրացնել երեքի: Ըստ նախարարին, տիե-



զերական գործունէութիւնը Յայաստանի համար առաջնահերթ ուղի է, իսկ արբանեակներուն շնորհիւ պիտի հարստանայ հայ մասնագետներուն գիտելիքները: Յայրապետեան Նշեց նաեւ, որ վերջին շրջանին աւելի կ'աճի Ափիլոքի մասնակցութիւնը Յայաստանի արդիւնաբերական զարգացումին:

ՓՈՒՆԱԳՐԸ ՄՊԱՌՆԱԿԻՔՆԵՐՈՒ ՏԱՐԱՓ

Իսրայէլեան եւ ամերիկեան լրատուամիջոցներ հաղորդեցին, թէ Իսրայէլի պատերազմական սեղմ կառավարութիւնը տակաւին կը մտադրէ հակադարձել Իրանի հրթի-



ռային յարձակումներուն՝ թիրախաւորելով ենթակառուցվածքներ, առանց պատճառելու մարդկային վնասներ: Իսրայէլեան կառավարութիւնը նաեւ կը քննարկէ հակադարձութեան դիւստրուսիան միջոցները՝ խստացնելու Իրանի մեկուսացումը եւ անոր նկատմամբ սահմանուած պատժամիջոցները:

Միւս կողմէ, Իրանի արտաքին գործերու նախարար Յոսէյն Միր Ապտալապեան իր բրիտանացի պաշտօնակից Տեյվիտ Փամերոնի տեղեկացուց, որ իրենք չեն ուզեր սրել լարուածութիւնը, սակայն իսկոյն եւ աւելի ուժգին պիտի հակադարձեն, եթէ Իսրայէլ դիմէ ոտնձգութիւններու: Իսկ Իրանի ազգային անվտանգութեան գերագոյն խորհուրդը Իսրայէլը գզուչացուց թշնամական գործողութիւններու դիմելու վտանգաւոր հետեւանքներէն: «Յեղափոխական պահակազուկին լայնածաւալ հրթիռարձակումը հակադարձութիւն էր կարմիր գիծերը հատած Իսրայէլին ու կը հիմնուէր ՄԱԿ-ի ուխտին երկրորդ յորդանանի վրայ», Նշուեցաւ Իրանի յայտարարութեան մէջ: Դիտել տալով, որ տեղի ունեցածը պատժիչ թեթեւագոյն գործողութիւնն էր, Թեհրան Նշեց, որ թիրախաւորած է բացա-

ռաբար գինուորական կեդրոններ, խուսափելով տնտեսական կարեւոր կետեր եւ ենթակառուցվածքները հարուածել: «Այժմ գինուորական նոր գործողութիւն չկայ մեր ծրագրին վրայ», Նշեց Իրան, սակայն զգուշացուց Իսրայէլը, որ յաջորդ ոտնձգութեան պարագային, հակադարձութիւնը տասնապատիկ աւելի ուժեղ պիտի ըլլայ:

Իսրայէլեան բանակի բանբերը Տանիէլ Յադարի յայտնեց, որ վերջին զարգացումներուն լոյսին տակ, որոշուած է փոխել ներքին ապահովութեան քաղաքականութիւնը եւ վերաբանալ վարժարանները, որոնք երկու օր փակուած էին Իրանի յարձակումին սպառնալիքով:

Ամերիկեան գինուած ուժերու կեդրոնական հրամանատարութիւնը յայտարարեց, թէ Կիրակի առաւօտեան եւրոպական մարտանաւերուն աջակցութեամբ յաջողած է կործանել Իսրայէլի ուղղութեամբ Իրանէն ու Եմենէն արձակուած անօդաչու 80 սարք եւ անուազկ վեց հեռահար հրթիռ: Ըստ յայտարարութեան, այս կը ներառէ 7 սարքեր, որոնք գետնի վրայ կործանուած են Եմենի մէջ, ինչպէս նաեւ տակաւին չարձակուած հեռահար հրթիռ մը:



Իսկ Ֆրանսայի նախագահ Էմանուէլ Մաքրոն Իրանը համարեց իսկական վտանգ մը եւ խոստացաւ Իսրայէլը համոզել, որ զերծ մնայ հակադարձութենէն, որ կրնայ աւելի սրել շրջանի լարուածութիւնը:

ՀՀ ՎԱՐՉԱԳԵՏ.

«ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄԵԾՔՊԵՆ ԿԸ ԿԱՐԵՒՈՒԷ ԻՐԱՎՆԱՅԻՆ ՀԵՏ ՅԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒ ԸՆԿԱՅՆՈՒՄԸ»

Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանը շնորհալուրական ուղերձ յղած է Իրլանդիայի վարչապետ Սայմոն Հարրիսին՝ պաշտոնը ստանձնելու առիթով:



Շնորհալուրական ուղերձին մեջ ըստած է. «Շնորհակալ եմ խնդրում ձեր շնորհավորանքներս Իրլանդիայի վարչապետի պաշտոնը ստանձնելու առաջնությունը: Մաղթում եմ յաջողություններ ձեր հետագայ նախաձեռնություններում:

Համոզուած եմ, որ ձեր առաջնորդութեամբ Իրլանդիան կը շարունակէ զարգանալ եւ բարգաւաճել՝ ի շահ Իրլանդիայի բարեկամ ժողովրդի:

Հայաստանը մեծապէս կարելորում է Իրլանդիայի հետ ժողովրդավարական ընդհանուր արժեքամակարգի վրայ հիմնուած յարաբերութիւններու հետագայ ընդլայնումն ինչպէս երկկողմ, այնպէս էլ՝ բազմակողմ մակարդակներում:

Առանձնաշատուկ կարելորութիւն եմ տալիս մեր երկրորդների միջեւ փոխգործակցութեանը եւ շրջանակներում: Վստահ եմ, որ ՀՀ-ԵՄ յարաբերութիւնների հետագայ ընդլայնումը մեծապէս կը նպաստի նաեւ երկկողմ համագործակցութեանը:

Լիայնու եմ, որ առաջիկայում առիթ կ'ունենանք հանդիպելու եւ քննարկելու Հայաստանի եւ Իրլանդիայի միջեւ համագործակցութիւնը հեռանկարային նոր ծրագրերով համարելու հնարաւորութիւնները:

Կրկին շնորհալուրում եմ ձեզ եւ մաղթում ամենայն բարիք, իսկ Իրլանդիայի բարեկամ ժողովրդին՝ խաղաղութիւն եւ բարեկեցութիւն:

ԹՈՔԱԵՐԸ ՓԱՇԻՆՅԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՅՈՎ ՀՐԱԴԻՐԱԾ Ե ԴԱԶԱՆՍՏԱՆ

Ղազախստանի նախագահ Զասիմ-ժումարթ Թոքաեւը Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանը պաշտոնական այցով հրաւիրեց Ղազախստան:



Այդ մասին ան յայտարարած է՝ Երեւանի մէջ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ հանդիպումէն յետոյ:

«Առիթն օգտուելով՝ կը փափաքեմ մեծարգոյ պարուն վարչապետը պաշտոնական այցով հրաւիրել Ղազախստան: Վստահ եմ, որ այսօրինակ բարի քայլերը պիտի մերձեցնեն մեր ժողովուրդները եւ պիտի խորացնեն մեր համագործակցութիւնը», - նշած է Թոքաեւը՝ յաւելելով, որ Երեւանի մէջ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ բանակցութիւնները անցած են փոխադարձ ըմբռնման եւ վստահութեան մթնոլորտի մէջ, ինչ որ նոր ազդակ պիտի հաղորդէ Հայաստանի եւ Ղազախստանի յարաբերութիւններուն:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՀՀ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԻՉ.

«ՎԵՐՋԻՆ ՏԱՐԻՆԵՐՈՒՆ ԱՏՐՊԷՅՃԱՆԻ ՈՒՍՏԱՆԱԿԱՆ ՅԱՐԱՔԵՐՈՒՄԸ ՅԱՆՎԵՅՈՒՅՄԸ Ե ՏԱՐԱԿԵՐՈՒՄԸ ՄԵՋ ԼՈՒՐՁ ԲՆԱՊԿՂՎԱՆՄԱՆ ԽՆԳԻՐՆԵՐՈՒ»

Վերջին տարիներուն Ատրպեյճանի ռազմական յարձակումը յանգեցուցած է տարածաշրջանին մէջ լուրջ բնապահական խնդիրներու: Այս մասին նշած է Միջազգային իրաւական հարցերով ՀՀ ներկայացուցիչ Եղիշէ Կիրակոսեանը՝ Եւրոպայի վարչապետի բնութեան եւ բնական միջավայրի պահպանութեան մասին Պեռնի պայմանագրի հիման վրայ Հայաստանի եւ Ատրպեյճանի միջեւ իրաւարարութեան վարոյթի առաջին ընթացակարգային նիստի ընթացքին:

(Շար.ը տեսնել 3րդ էջ)

ԱԼԵՆ ՍԻՄՈՆԵԱՆՆ ՈՒ ԶԱՍԻՄ-ԺՈՒՄԱՐԹ ԹՈՔԱԵՐԸ ԱՅՅԵԼԱԾ ԵՆ ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնեանը ընդունած է Ղազախստանի Հանրապետության նախագահ Զասիմ-ժումարթ Թոքաեւը:

Ողջունելով Ղազախստանի նախագահը Ազգային ժողովին մէջ, համերաշխութիւն յայտնած է բարեկամ ղազախ ժողովուրդին ջիւղերի արհաւիրքի դէմ պայքարին մէջ:

«Պարոն նախագահ, ձեր պաշտոնական այցը Հայաստան կարելոր քայլ է մեր երկու երկիրներուն միջեւ փոխադարձ յարաբերութիւններու զարգացման եւ ամրապնդման համար: Պիտի ուզէի նշել Հայաստանի եւ Ղազախստանի միջեւ հաստատուած փոխգործակցութեան բարձր մակարդակը երկկողմ եւ բազմակողմ ձեւաչափերով՝ յատկապէս ընդգծելով համագործակցութիւնը միջխորհրդարանական հարթակներու մէջ», - ըսած է ԱԺ նախագահը:



Զասիմ-ժումարթ Թոքաեւը բարձր գնահատած է Հայաստանի եւ Ղազախստանի միջեւ 25-ամեայ բարեկամութեան ու համագործակցութեան պայմանագրի վրայ հիմնուած յարաբերութիւնները՝ ընդգծելով տնտեսական, քաղաքական եւ մշակութային ոլորտները: Ղազախստանի նախագահը կարելորած է խորհրդարաններուն միջեւ աշխոյժ փոխգործակցութիւնը՝ ընդգծելով խորհրդարանի դերը հայ-ղազախական համաձայնագրերու վաւերացման գործընթացին մէջ:

Ալեն Սիմոնեանը Զասիմ-ժումարթ Թոքաեւին ներկայացուցած է Հայաստանի Հանրապետության կառավարութեան «Խաղաղութեան խաչմերուկ» նախագիծը՝ կարելորելով Ղազախստանի աջակցութիւնն ու մասնակցութիւնը ծրագրի իրականացման հարցում:

«Խաղաղութեան խաչմերուկ» ռազմաքաղաքական դերակատարում ունի Հարաւային Կովկասի մէջ անվտանգութեան հաստատման, ինչպէս նաեւ տարածաշրջանի բոլոր երկիրներու համար առեւտրատնտեսական յարաբերութիւններու զարգացման հարցով», - ընդգծած է խորհրդարանի ղեկավարը:

Հանդիպման ընթացքին քննարկուած են հայ-ատրպեյճանական յարաբերութիւններու կարգաւորման գործընթացը, հայ-ղազախական երկկողմ եւ բազմակողմ առեւտրատնտեսական, մշակութային ու քաղաքական փոխգործակցութեան սերտացման վերաբերող հարցեր:

Հանդիպման աւարտին Ալեն Սիմոնեանը եւ Զասիմ-ժումարթ Թոքաեւը այցելած են Մատենադարան, ուր Ղազախստանի նախագահին ներկայացուած են թանգարանին մէջ պահուող հայերէն եւ օտարալեզու, այդ շարքին՝ հայաստա ղփշաղերէն ձեռագրերը:

«Մատենադարանին մէջ պահուող եզակի ձեռագրերը միջմշակութային համագործակցութեան խորհրդանշէր են եւ կը յիշեցնեն մեզ երկարամեայ կապերուն մասին, որոնք գոյութիւն ունեցած են տարածաշրջանին մէջ եւ անոր սահմաններէն դուրս», - նշած է ԱԺ նախագահը:

ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ՆԵՐԹԱՓԱՆՑՈՒՄԻ ԶԱՆՈՂ ՓՈՐՁ

(Շարունակուած Ա. Էջէն)

խուսափիլ քաղաքապետական եւ թաղապետական ընտրութիւններէն: «Խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրի խորհրդարանի դիւանը հրաւիրած է ժողովի, շատ հաւանաբար քաղաքապետական ընտրութիւնները երրորդ անգամ չյետաձգելու որպէս նախապատաստութիւն», ըսաւ ժամաժամ: Ան քաղաքական բոլոր ուժերուն կը ուղղեց չգործակցելու ընտրութիւնը վերստին յետաձգելու առաջարկին, թէն քաղաքապետութիւններուն մեծամասնութեան աշխատանքը անդամալուծուած է:

ՅԱՐԱԿՈՒՄ ԴՐԱՍԱՏՈՒՆԵՐՈՒ ՎՐԱՅ

«Միաւորում» դաշինքը յայտարարեց, թէ յաջորդական զգուշացումներէ ետք, երկ առաւօտեան ժամերէն սկսուեալ յարձակում գործած է բազմաթիւ դրամատուներու:



մասնաճիւղերուն վրայ, սկսելով Համրայէն մինչեւ մայրաքաղաքի այլ շրջանները: Ապահովական ուժերը իսկոյն տարածուած են դրամատուներուն առջեւ, որոնք փակած են իրենց դռները եւ կանխած քաղաքայիններուն մուտքը:

(Շար.ը տեսնել 3րդ էջ)

«ՉԻ ԿՐՆԱՐ ԱՏՐՊԷՅՃԱՆԻ ՀԵՏ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅ ԲԼԼԱՎ՝ ԱՌԱՄՅ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐՈՒՄ»

Կ'ԸՍԵ ԱՐԹՈՒՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

Հայաստանը չի կրնար Ատրպեյճանի հետ սահմանազատման գործընթացի երթալ՝ առանց իրաւական հիմքերու:

Խորհրդարանական ճեպագրոյցի ժամանակ այս մասին վստահեցուց Հայաստանի Ազգային ժողովի իշխող «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցութեան քարտուղար Արթուր Յովհաննիսեանը՝ անդրադառնալով ընդդիմութեանը հնչող մտահոգութեան, թէ Հայաստանի իշխանութիւնը կրնայ առանց իրաւական հիմքերը յստակացնելու Տաւուշի հատուածին մէջ Ատրպեյճանի հետ սահմանի սահմանազատման գործընթաց սկսիլ, նոյնիսկ զիջումներու երթալ:



«Չի կրնար ըլլալ գործընթաց առանց իրաւական հիմքերու: Մենք ասոր մասին բազմիցս խօսած ենք», - ըսաւ Արթուր Յովհաննիսեանը:

Ան վստահեցուց՝ ամէն ինչ կ'ընեն ելլելով իրաւական հիմքերէ, անոր համար գործընթացները դաւադր կ'ընթանան: «Որեւէ քարտեզ, որեւէ միլիմետր պէտք է ունենայ իրաւական հիմք: Առանց ասոր մենք յառաջ չենք շարժիլ», - նշեց պատգամաւորը:

Պաշտպանութեան եւ անվտանգութեան հարցերու յանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարեան յաւելեց, որ բազմաթիւ իրաւական հիմքերու մասին խօսուած է. «Խորհրդային միութեան փլուզումէն յետոյ ի՞նչ սահմաններով անջատուեցան միութեանական պետութիւնները, վարչական սահմանները ո՞ր էին: Իրաւական արձանագրում կար: Բայց յետոյ պարզուեցաւ, որ այդ իրաւական արձանագրումները դեռ ճշդումներու խնդիր ունին», - ըսաւ ան՝ ընդգծելով, որ սահմանազատման հարցերով յանձնաժողովները անոր համար ստեղծուած են, այդ խնդիրները պէտք է լուծուին:

Քոչարեան շեշտեց, որ սահմանազատման եւ սահմանազոծման գործընթացին նպատակը Ատրպեյճանի հետ խաղաղութեան հասնիլն է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵՋ ԱՐՏԱԳՐՈՒՄԸ ԶԱՆԻ ՄԸ ԶԻՆԱՏԵՍԱԿՆԵՐ ՆԵՐՔԻՆ ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐ ԱՆՅԱԾ ԵՆ. ԱՆՈՒՔ ՅՈՒՍԵՒԿԱՅԻՆ ՊԻՏԻ ԿԻՐԱՌՈՒԻՆ ԶԻՆՈՒՄ ՈՒՇԵՐՈՒՆ ՄԵՋ

Հայաստանի Բարձր արհեստագիտութիւններու արդիւնաբերութեան նախարարութիւնը հանդիպած է ռազմարդիւնաբերութեան ոլորտին մէջ գործունեութիւն ծաւալող բոլոր ընկերութիւններուն հետ, քննարկած է առկայ խնդիրները: Իրականացուած են քանի մը զինատեսակի ներքին փորձարկումներ, որոնք մօտ ապագային պիտի կիրառուին Հայաստանի շինուած ուժերուն մէջ:



Այս մասին նշեց ՀՀ Բարձր արհեստագիտութեան արդիւնաբերութեան նախարար Մխիթար Հայրապետեան՝ իր պաշտոնավարման 100 օրուան նուիրուած մամուլի ասուլիսի ժամանակ:

Նախարարը նշած է, որ պաշտոնավարման առաջին օրէն ռազմարդիւնաբերութեան ոլորտը եղած է իր ուշադրութեան կեդրոնին: «Այս ուղղութիւնը բարձր արհեստագիտութիւններու եւ տեղեկատուական արհեստագիտութիւններու հետ մեկտեղ, մեծ ուշադրութեան արժանացած է իմ կողմէս, որովհետեւ այդ ուղղութիւնները ե՛ն նախարարութեան, ե՛ւ կառավարութեան համար առաջնահերթութիւն են», - նշեց ան:

Նախարարը նաեւ տեղեկացուց, որ քանի մը զինատեսակի եւ կառավարման քանի մը համակարգի գծով իրականացուած են ներքին փորձարկումներ, որոնք մօտ ապագային Հայաստանի շինուած ուժերուն մէջ կիրառուելու հնարաւորութիւն պիտի ունենան: Ան յաւելեց, որ ռազ-

(Շար.ը տեսնել 3րդ էջ)

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՄՏՐԻՈՅ ԿՐԱՅՎԱԿԱՆ ԻԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴՆ ՈՒ ՈՒՏԱՌՈՒՆԵՐԸ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. ծայրագոյն պատրիարք եւ Ամենայն Յայրոց կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մէջ ընդունեց անտորիացի ուխտաւորներ՝ գլխաւորութեամբ Աստորիոյ Կրօն-Սեբաոյ թեմի առաջնորդ Վիկտոր Կլայիտին:



Եպիսկոպոս Զրառլովաշիւի եւ ուղեկցութեամբ Կեդրոնական Եւրոպայի եւ Հունտի Յայրապետական պատուիրակ գերազնոր S. Տիրան Եպիսկոպոս Պետրոսեանի:




Ամենայն Յայրոց կաթողիկոսը, անդրադառնալով Արեւելի ժամանակներուն հայ ժողովուրդին առջեւ ծառայած մարտաշարժներուն, իր շնորհակալութիւնը յայտնեց Աստորիոյ իշխանութիւններուն եւ ժողովուրդին Յայաստանի ցուցաբերած աջակցութեան համար:

Նորին Արքեպիսկոպոսը իր օրհնութիւնը փոխանցեց ուխտաւորներուն՝ անոնց այցը Յայաստան եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի նկատելով զօրակցութեան եւս մէկ վկայութիւն:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ «ԻՇԽԱՆՈՒ ԿԱՐԳ»Ի ԾԵՂԵՆՔՆԸՆՈՎ ՊԱՐԳԵՒԱՏՐԵՅ ԲԱՐԵՐԱՐ ԵՐՋՈ ԱՎԱՌՈՒՆԵՆՔԸ

Ընդառաջելով Լիբանանի հայոց թեմի առաջնորդ Գեորգ Տ. Շահէ Արք. Փանոսեանի խնդրանքին եւ ի գնահատութեամբ երկար տարիներու ազգանուէր ու եկեղեցականութեան, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Յայրապետը Աթոռի Տանի Կիլիկիոյ Կաթողիկոսութեան «Իշխանի կարգ»ի շքանշանով պարգևատրեց բարերար Երջո Սամուէլեանը:



Այս առիթով հրապարակուած Յայրապետական սրբատառ կոնղակիս մէջ Նորին Արքեպիսկոպոսը հետեւեալ կերպով բնութագրած է եկեղեցական ու ազգային բնագաւառին մէջ բարերար Սամուէլեանի գործունէութիւնը. «Լիբանանի հայութիւնը Ձեզ ճանաչուաւ որպէս լուսարձակներ հեռու, սակայն իր ազգային, եկեղեցական, կրթական ու ընկերային կեանքին ներքին բարեպարտութիւններով կարելոք ներդրում ունեցող սրտակից ազգային ու առատաձեռն բարերար: Լիբանանեան պատերազմի թե՛ օրերուն, Լիբանանի Ազգ. Առաջնորդարանը ստիպողաբար հեռացաւ իր կայքէն եւ գործեց շատ ծանր ու դժուար պայմաններու մէջ: Պարզ Յամուէլի մէջ նոր Առաջնորդարան մը կառուցելու անյետաճգելի ծրագիրը իրականացաւ շնորհիւ Ձեր իշխանական նուիրատուութեան: Նորակառոյց Ազգ. Առաջնորդարանի համալիրին ներս Երջո Սամուէլեան անունով մկրտուած սրահը Անց կը նկատենք շօշափելի վկայութիւն մը՝ Լիբանանի հայութեան բարձր գնահատանքին ու խոր երախտագիտութեան: Զայ գիտնէք, որ Աստուծոյ կողմէ Ձեզի շնորհուած բարիքները անդամուկ ու առատաձեռն կերպով բաժնած էք մեր ժողովուրդին, յատկապէս կարիքաւոր դասին հետ՝ թե՛ Ազգ. Առաջնորդարանի Ընկերային ծառայութեան բաժանմունքին ճամբով եւ թե՛ առանձնապէս՝ Չուարթնոց կերտուէն սկսեալ մինչեւ Թոշնոց բոյն, եւ հոգալով համեստ ընտանիքներու գաւակներուն կրթաթոշակը ու ջքաւոր հիւանդներու բժշկական խնամքին ծախսերը»:

Սրբատառ կոնղակի աւարտին, Յայրապետը իր աղօթքը բարձրացուցած է առ Աստուած, որ բարերար Երջո Սամուէլեանին ու անոր հարազատներուն պարգեւ քաջառողջութիւն եւ իր օրհնութեամբ վարձահատոյց ըլլայ անոնց:

ԱՐՏԱԳԱՂԹ ՍՓԻՒՌԻ ԿԱՌՈՅՑՆԵՐԷՆ, ԻՆՉՊԷՍ...

Սփիւռքը եւ ինչ ապրող բազմաթիւ մտաւորականներ, անշուշտ արդարօրէն, մնայուն ահագնազ կը ինչեցնեն Յայաստանէն արտագաղթի երեւոյթին եւ անոր հետեւանքներուն մասին, ընդհանրապէս անգիտատեղի կամ գիտաւթով ու անտեսելով, որ Սփիւռքը իր կարգին կը դիմագրաւէ արտագաղթի մտահոգիչ տագնապ մը:

Այդ, արտագաղթը համատարած երեւոյթ է Սփիւռքի գրեթէ բոլոր գաղութներուն մէջ: Անպակասաբար խօսքը չի վերաբերիր երկրէ երկրի, գաղութ գաղութ կատարուող տեղաշարժներուն:

Այլ՝ Արտագաղթ հայկական քաղաքական կառոյցներէն: Արտագաղթ հայ դպրոցէն: Արտագաղթ հայ մշակոյթէն: Արտագաղթ հայ եկեղեցիէն: Այս արտագաղթը կրնայ խոյնքան վտանգաւոր հետեւանքներ ունենալ, որքան Յայաստանէն արտագաղթը՝ հայութեան ամբողջականութեան պահպանման առումով: Կրնայ անմիջապէս առարկուիլ, որ այս ի՞նչ բաղդատութիւն է, եւ ամբողջովին տարբեր են Յայաստանի եւ Սփիւռքի պայմանները: Կրնայ առարկուիլ, որ տարբեր է Սփիւռքի միջավայրը՝ կլանող ու օտարացնող: Տակաւին կրնայ առարկուիլ, որ քաղքեցի բարքերը կերտումստուտաբար արտագաղթներ կը զարգացնեն:

Եւ դէռ կրնայ առարկուիլ, որ կարգ մը գաղութներու մէջ տեղի ունեցած քաղաքական ցնցումները աւելի եւս տարտղեցին հայութիւնը եւ նպաստեցին այլաստումին... Այս բոլորը ճիշդ են եւ քանի որ ճիշդ են՝ ուրեմն յանցաւորը ժողովուրդն է, որ կը նահանջէ «բանլի եւ գործով», ինչպէս պիտի ըսեր Շահնուր, ժողովուրդն է, որ կ'արտագաղթէ հայ քաղաքական կառոյցներէն, հայ դպրոցէն, հայ մշակոյթէն, հայ եկեղեցիէն, եւ Սամուէլ Պեթբեի «Կոտոն» սպասելու պէս, կը սպասենք որ հեռացողը, արտագաղթողը զգաստութեան գալով վերադառնայ...

Կը սպասենք ու կը փակենք Էջը՝ զարմանալով որ յաջորդ տարին արտագաղթողներու նոր հոսք մը կայ... Կը դատապարտենք արտագաղթողը... Եւ դպրոց մը կը փակենք ու մշակութային միութիւն մը կը զոցենք...

Եթէ հօտը սկսած է տարտղեցուիլ եւ խուլմէն փախուստ տուողներ կան... Է՛հ, ո՛ր է հովիւը, ի՞նչ կ'ընէ կասեցնելու համար փախուստը:

Յաշուտուութեան կարգով, հայրենի մեր ժողովուրդը եկաւ ըսելու որ արտագաղթին պատասխանատուն միայն ժողովուրդը չէ, այլ՝ կառավարողները վերահասարակային յաւանքած գործելանքները, որ անտեսելով ժողովուրդին եւ երկրին գերագոյն շահերը, կողոպտած էր տնտեսութեան մեծ մասը եւ սահմանափակած քաղաքական մտքի ազատ զարգացումը:

Արդեօք ժամանակը հասած չէ՞, որ սփիւռքեան կառոյցներէն արտագաղթին համար պատասխանատուներ փնտռենք նաեւ «յանցաւոր» ժողովուրդէն դուրս: Այսօր հայահոծ գաղութներ կը փոքրանան ոչ միայն

գաղութ գաղութ տեղաշարժներուն պատճառով, այլեւ «կառավարման կառոյցներէն» տեղի ունեցող ներքին արտագաղթին պատճառով՝ փաստօրէն յառաջացնելով երկու տարբեր «գաղութներ» աշխարհագրական նոյն տարածքին մէջ: Եւ ճիշդ չէ արտագաղթողներու «գաղութը» որակել քաղքեցիներու, այլաստեալներու եւ օտարացածներու համախմբում՝ մէկ կողմէ անտեսելով անոնց արտագաղթին տուն տուող պատճառները, եւ միւս կողմէ մերժելով անոնց վերանորոգ ինքնութեան փնտռումը:



իրաւունքը եւ անոնց մէջ չտեսնելով ազգային, կրթական ու մշակութային ներուժը, որ մեծ ներդրումներ կրնայ ունենալ ազգային կեանքի վերաորակաւորման մէջ:

Նորամուտ այս «գաղութներէն» մէջ արդեօք քի՛չ է թիւը արուեստագետներու, մտաւորականներու, քաղաքական ու հանրային գործիչներու, մարզիկներու, որոնց իրագործումները կ'ընկալենք հպարտութեամբ եւ կը ծափահարեմք անոնց իրագործումներուն իբրեւ ազգային հարստութիւններ: Տակաւին, արդեօք քի՛չ է թիւը անոնց, որոնք իրենց ներդրումը կը բերեն Մայր Յայրենիքի վերելքին:

Յարց կու տանք, որ արդեօք ծերացած կառոյցները այլեւս չէ՞ն կրնար տիրութիւն ընել:

Արդեօք ծերացած ու շատոնց ժամանակավրէպ չէ՞՞ երգած 1860-1863 օսմանցի սուլթաններուն կողմէ պարտադրուած «ազգային սահմանադրութեան» կառավարման եղանակը: Յետեղեռնի շրջանին թերեւս ժամանակաւոր անհրաժեշտութիւն էր այդ դրութեան որդեգրումը, բայց ժամանակի թաւալումին եւ հայ հասարակագիտական ու քաղաքական մտքի, ինչպէս նաեւ կենցաղային պայմաններու զարգացման զուգահեռ չզարգացաւ գաղութներու կառավարման եղանակը, մեծ ճեղք մը յառաջացնելով յաջորդական սերունդներուն եւ «կառավարման ինչ կառոյցին» միջեւ, որ քիչ մը «օսմանապետական իշխանավարութիւն» կը յուշէ:

Արդեօք հաշուտուութեան եւ հաշուառութեան թափանցիկ համակարգի բացակայութիւնը գաղութներու ղեկավարման գործնական մեծ ղեկակատար չէ՞՞ այս ներքին արտագաղթի զարգացման մէջ:

Արդեօք ժողովուրդավար յարաբերութեան բացակայութիւնը ներքին արտագաղթը աւելի չի՞ դիւրացնէր կամացկամաց անկախ մտածումի տեր դարձող յաջորդական սերունդներուն համար:

Սփիւռքահայը արդեօք կարծիք ունի՞՞ գաղութներու ղեկավարման դրութեան բարեփոխութեան մասին: Կըրնա՞յ մասնակից դառնալ: Կ'ուզէ՞՞ մասնակից դառնալ ծերացած կառոյցին մէջ առանց փոփոխութեան հեռանկար տեսնելու:

Շատերու համար թապուս են այս հարցադրումները, իսկ ուրիշներ հեղեթիփոխութեան պիտի նկատեն գաղութը՝ յաւելեալ ջուր լեցնելով ներքին արտագաղթի ջրաղացին:

Բայց ժամանակը հասած է, որ այս մտահոգութիւնները բարձրաձայն արտայայտուին ու արձարծունի՝ նախքան որ արտագաղթող կողմը դառնալ մեծամասնութիւն, թէ՛ արդէն չէ դարձած, իսկ ինչին կառուած կողմը յանկարծ շուրջը նայելով նշմարէ, որ աւերակներուն վրայ կը «թագաւորէ»:

ԿԱՐՈՒԹ ԹԵՆՊԵՆԱՆ

«ՎԵՐՋԻՆ ՏԱՐԻՆՆԵՐՈՒՄ ԿՐԻՍՏՅԱՆՈՒ ԲԱԶՄԱԿԱՆ ՅԱՐՁԱՎՈՒՄԸ...»

(Ծարումակուած Բ. Էջն)

Լսումները տեղի ունեցած են Լահիյի մէջ՝ Իրաւարարութեան մշտական դատարանին մէջ:

Եղի՜՞ Կիրակոսեանի խօսքով՝ բնապահպանութեան ոլորտին մէջ Յայաստանի յետագիծը ինչնին խօսուն է. Յայաստանը բազմիցս վերահաստատած է իր յանձնառութիւնը տարածաշրջանին մէջ վայրի ֆլորայի ու ֆաունայի եւ բնական միջավայրի պահպանութեան առնչութեամբ, ներառեալ՝ Պեմի պայմանագրի մշտական յանձնաժողովին հետ իր սերտ համագործակցութեան եղանակով:

«Մինչդէռ, Ատրպէյճանը կարծես հաւատարիմ է իր՝ այսպէս կոչուած «բնապահպանական մտահոգութիւնները» քաղաքական դրդապատճառներով որպէս գործիք օգտագործելու անամօտ ռազմավարութեան: Վերջին տարիներուն Ատրպէյճանի ռազմական յարձակումը յանգեցուցած է տարածաշրջանին լուրջ բնապահպանական խնդիրներու՝ ոչնչացնելով անտառներ, աղտոտելով հողային եւ ջրային միջոցները, այդ շարքին՝ սպառնելով Ասրանգի ջրամբարի միջոցները: Լեռնային Ղարաբաղի ֆլորան ու ֆաունան նաեւ վտանգուած են Ատրպէյճանի անդադար քանդման եւ շինարարական աշխատանքներու պատճառով, որոնք նպատակաւորապէս վնասանքներու կատարողներն են իրենց հայրենիքը:

Յայաստանը հետամուտ պիտի ըլլայ այս իրաւարարութեան վարոյթի շրջանակներուն մէջ իր դիրքորոշման վերահաստատման եւ շահերու պաշտպանութեան՝ վիճարկելով Ատրպէյճանի անհիմն պնդումները, իսկ վարոյթի համապատասխան փուլին ներկայացնելով իր իսկ պահանջները Ատրպէյճանի դէմ վերջինիս բնապահպանական պարտաւորութիւններու շարունակական խախտման առնչութեամբ»,- ըսուած է Միջազգային իրաւական հարցերով ՀՀ ներկայացուցիչի խօսքին մէջ:

